ԱՂՕԹԻՐ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԱՐԾԻԵԱՆԻ

Երբ խռովայոյզ, դառրն մտքեր վրդովում են քո հոգին,
Եւ զզւանքով սկսում ես նայել մարդկանց ու կեանքին.
Երբ ընկղմւած դու վշտերի անհուն, անեզր ովկեանում,
Տառապում ես և յուսահատ մահւան հանգիստ աղերսում.
Երբ յանկարծ մի հոգեմաշ ցաւ ծանրանալով քո վերայ,
Քեզ թւում է՝ թէ այդ ցաւից էլ փրկւելու յոյս չը կայ...
Դու անվհատ, ծունկ խոնարհած, աչքդ երկինք ամբարձիր
Եւ լի յուսով, վառ հաւատով Տիրոջ անուանն աղօթիր...

Աղօթքի մէջ, հաւատա ինձ, դու կը գտնես ցանկալի
Անդորրութիւն, քաղցր հանգիստ յուզւած սրտի ու մտքի.
Աղօթքի մէջ քեզ կը ժպտան, որպէս աստղեր լուսավառ
Ե՛ւ սև, մռայլ կեանքը մարդկան, և՛ գառնալից այս աշխարհ.
Ջերմ աղօթքը որպէս աղբիւր պայծառ յուսով լի կեանքի,
Այրւած սիրտդ կը զովացնէ, կը տայ նոր ոյժ, նոր հոգի.
Ջերմ աղօթքը որպէս երկնից անմահ նւագ քաղցրալիր,
Քեզ կախարդած՝ կը վերացնէ մի այլ աշխարհ... Աղօթիր...

Մոսկւա. 11 յուլիսի, 1890 թ.